

Հավելված  
ՀՀ կառավարության 2019 թվականի  
սեպտեմբերի 19-ի N 1241 - Ն որոշման

«Հավելված N 11  
ՀՀ կառավարության 2002 թվականի  
հունիսի 29-ի N 867 - Ն որոշման

#### Կ Ա Ր Գ

ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱ-  
ՍԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՑԱՑՎԱԾ  
ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՍՏՈՒԳԱՃՇՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են դեղատնային գործունեության, բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունների համապատասխանության ստուգանճառում իրականացնելու նպատակով լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման վայրում ուսումնասիրություն (այսուհետ՝ ուսումնասիրություն) իրականացնելու հետ կապված հարաբերությունները:

2. Ուսումնասիրությունը դեղատնային գործունեության, բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունների համապատասխանության ուսումնասիրումն է:

3. Ուսումնասիրության նպատակն է կանխավ գնահատել բժշկական օգնության և սպասարկման իրականացման համար պարտադիր պահանջների և պայմանների վիճակը, հայտնաբերել բացասական երևույթները, դրանք կանխելը և վերացնելը:

4. Ուսումնասիրությունը կարող է անցկացվել ինչպես լիազոր մարմնի աշխատողներից ստեղծված հանձնաժողովի, այնպես էլ մեկ աշխատողի կողմից, իսկ մասնագիտական հատուկ

գիտելիքներ պահանջվելու դեպքում ուսումնասիրությանը կարող է ներգրավվել նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության համապատասխան բնագավառի խորհրդատուն:

5. Ուսումնասիրությունն իրականացվում է լիազոր մարմնի ղեկավարի հրամանի հիման վրա, որում նշվում են՝

1) ուսումնասիրություն կատարելու իրավական հիմքերը, նպատակը.

2) առողջապահության բնագավառի լիցենզիա ստանալու համար դիմած հայտատուի տվյալները (իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անուն-ազգանունը, իրավաբանական անձի գտնվելու կամ անհատ ձեռնարկատիրոջ բնակության և գործունեության իրականացման վայրերը).

3) ուսումնասիրության իրականացման վայրը, ժամկետը.

4) ուսումնասիրություն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) տվյալները (անունը, ազգանունը, պաշտոնը):

6. Լիցենզավորման հայտ ներկայացրած հայտատուն 3 օր առաջ ծանուցվում է ուսումնասիրության իրականացման ժամանակի մասին:

7. Ուսումնասիրության իրականացման հրամանի մեկ օրինակը, նախքան ուսումնասիրությունն սկսելը, ուսումնասիրության իրականացման վայրում ներկայացվում է իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարին կամ անհատ ձեռնարկատիրոջը կամ վերջիններիս կողմից լիազորված անձին:

8. Ուսումնասիրություն իրականացնող հանձնաժողովը կամ աշխատողը ուսումնասիրում է լիցենզիա ստանալու համար ներկայացված հայտում և կից փաստաթղթերում նշված տեղեկությունների իսկությունը, օրենսդրությամբ սահմանված լիցենզավորման պարտադիր պայմանների և պահանջների առկայությունը և ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմում է 2 օրինակից արձանագրություն՝ համաձայն ձևի:

9. Արձանագրությանը կցվում են հայտավորված գործունեության տեսակի տեխնիկական, տեխնոլոգիական պարտադիր պայմանների և պահանջների առկայությունը ստուգելու համար նախապես կազմված աղյուսակները, որոնք լրացվում են ուսումնասիրության ժամանակ:

10. Արձանագրությունը և աղյուսակները ստորագրում են ուսումնասիրություն իրականացնող հանձնաժողովի անդամները կամ ուսումնասիրություն իրականացնող աշխատողը և հայտատուն: Հանձնաժողովի անդամի կամ հայտատուի կողմից հատուկ կարծիք ներկայացվելու դեպքում այն գրառվում է արձանագրության մեջ: Արձանագրության մեկ օրինակը հանձնվում է իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարին կամ անհատ ձեռնարկատիրոջը կամ նրանցից պատշաճ լիազորություն ստացած այլ անձանց:

11. Ուսումնասիրության արդյունքներն ուսումնասիրություն իրականացնող հանձնաժողովի կամ աշխատողի կողմից ներկայացվում են լիազոր մարմնի լիցենզավորման հանձնաժողովի նախագահին:

ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳԱՃՇՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N ....

\_\_\_\_\_ 20\_\_ թ.

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
(ուսումնասիրության անցկացման վայրը)

\_\_\_\_\_  
(ուսումնասիրությունն իրականացնող անձի (անձանց) անունը, ազգանունը)

\_\_\_\_\_  
(պաշտոնը (պաշտոնները))

\_\_\_\_\_  
(հայտատու իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անուն-ազգանունը)

\_\_\_\_\_  
(գտնվելու կամ բնակության վայրը)

**Ուսումնասիրության արդյունքները**

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

**Ներկայացված տեղեկությունների իսկությունը  
Հաստատում եմ**

\_\_\_\_\_  
(ուսումնասիրություն իրականացնող անձանց անունը, ազգանունը, ստորագրությունը)

**Հատուկ կարծիք**

\_\_\_\_\_  
(ուսումնասիրություն իրականացնող անձանց անունը, ազգանունը, ստորագրությունը)

**Առարկություններ**

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

(հայտատու իրավաբանական անձի տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ անուն-ազգանունը) »:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

**Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ**